ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և «ԱԳԵԱ» ՍՊԸ-ի միջև 2025թ. հունվարի 16-ին կնքված N ՀՏԶՀ-ՏԵԽՄԱ-ԾՁԲ-2025/1 ծածկագրով տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան «31» «03» **2025թ.**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ԱԳԵԱ» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն **Ա.Վարաժյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետը և Կողմերի միջև **2025թ. հունվարի 16-ին կնքված «ՀՀ Լոռու մարզի գ. Լորուտի կրթահամալիրի կառուցում» ծրագրի շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման** պետական գնման **N ՀՏԶՀ-ՏԵԽՄԱ-ԾՁԲ-2025/1** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերի դրույթները, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի Հավելված թիվ 1-ի աղյուսակում Ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանվում՝ Շինարարական աշխատանքների սկզբից մինչև 2025թ ապրիլի 30-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային
զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝ 00846441

Կենտրոնական Գանձապետարան

Հ/Հ՝ 900011052108
Սարգիս Բաղինյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԱԳԵԱ» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, գ.Ախուրյան

ՀՎՀՀ՝05536861

Հ/Հ՝1570059196730100
Բանկ՝ «ԱմերիաԲանկ» ՓԲԸ
Տնօրեն
Արթուր Վարաժյան

/ստորագրություն/
Կ.Տ